

ՏԱՍՆ ԵՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ



Տարեկան գինը 10 բուրջի, կես տարվանը 6 բուրջի. Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ». կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին Տեսութիւն. Շամախու շրջակայ հարկային գիւղերը. Նամակ խմբագրին. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կանանց միջազգային կոնֆէրենցիա: Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱՆԻՆ. Հայաստանից եկածները.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՇԱՄԱՒՈՒ ՇՐՋԱԿԱՅ ՀԱՅԱՔԱՆԱԿ ԳԻՒԼՆԵՐ

Այս ամառ մի փոքրիկ ճանապարհորդութիւն կատարելի Շամախու շրջակայ մի քանի հայաբնակ գիւղերում: Հանապարհորդութեան միջոցին քիչ թէ շատ ծանօթանալով այդ գիւղերի և նրանց բնակիչներին ներկայ դրութեան հետ, կամենում եմ մի քանի խօսք ասել նրանց մասին: Առում եմ մի քանի խօսք, որովհետեւ, խոստովանում եմ, ճանապարհորդութեան շուտակողմ և կարճատև լինելով, ես չը կարողացայ ծանրանալս կերպով ուսումնասիրել գիւղացիների կեանքի բոլոր երևոյթները, այլ միայն անպիսիները, որոնք նախ աւելի են աչքի ընկնում, և երկրորդ աւելի ընդհանուր բնութագրութիւն ունեն:

Իմ այցելած գիւղերը հետեւեալներն են. Սահեան, Գեօղիշ, Գիւրջիլիս և Հընդար—մի գծի վրա, և Մասարի, որը արդէն գտնվում է քաղաքից անտղ մի ուրիշ ճանապարհի վրա:

Նախ խօսենք վերոյիշեալ գիւղերի անտեսական դրութեան մասին:

Այդ գիւղերի բնակիչների համար ապրուստի միջոցներն են այգեգործութիւնը և երկրագործութիւնը: Այդիցները խաղողի են, որից գոյացած գինին բաւական մեծ հոշակ և անուռ ունի, և ամենայն տարի մեծ քանակութեամբ արտահանվում է Բագու, Ասարիսան, Նիմին-Նովոօրդ, Մոսկվա և այլ քաղաքներ: Գալով երկրագործութեան, նրանք զվարճուած են ցորեն և դարի են ցանում և այն էլ ոչ թէ վաճառելու համար, այլ

մեծ մասամբ միայն այնքան, որքան հարկատու է իրանց մի տարվայ ընթացքում: Այդ գիւղացիները անտեսական դրութեան մասին խօսելով, կարելի է ասել, որ նա միջակ է: Թէ այգեգործութիւնը և թէ երկրագործութիւնն այդ գիւղերում կատարվում է հաղթանակ գործիքներով, և մեր կարծիքով, գիւղացիների դրութեան ոչ այնքան էլ պայծառ, միջակ լինելու պատճառները մէկը սա է, մանաւանդ որ նրանց հարեան ուսուցանողները գիւղացիներն արդէն մի քանի տարի է, որ սկսել են գործածել ժամանակակից և կատարելագործված գործիքներ, օրինակ՝ դարմանը ցորենից կամ դարուց բաժանելու համար մի քանի տարի սրանից առաջ ուսուցանողները մէկը Ռուսաստանից բերել է առկա մի հասարակ կարմակերպութիւն ունեցող մեքենայ, որի մէջ լցնելով ցորեն կամ դարը (չը մաքրած), պտտեցնում են նրա կողքին յարմարեցրած անիւք, որի պտտելու ժամանակ մեքենան շատ գեղեցիկ և արագութեամբ բաժանում է ցորենը կամ դարին: դարմանից և մէկը մի կողմ է անում, միւրը մի ուրիշ կողմ: Այդպիսով աշխատանքը չափազանց հեշտանում է: Վերոյիշեալ մեքենայի շինութիւնը այնքան պարզ և հասարակ է լինում, որ ուսուցանողները հրեաներն անգամ կարողանում են շինել նրանից և այդպիսով մեծ թւով սկսում են տարածել իրանց գիւղերում, իսկ մեր հայաբնակ գիւղերից և ոչ մէկում չը կայ այդ օգտակար գործիքից, չը նայած որ իւրաքանչիւր գիւղացի կարող է առ մի որ և է 50—60 բուրջի և գնել, կամ նոյն իսկ իրանց գիւղի հիւանդին շինել տալ այդ մեքենայից:

Վերոյիշեալ գիւղերի անտեսական դրութեան միջակ և ոչ բարձր լինելու պատճառները մէկն էլ գիւղացիների մէջ թագաւորող անհասկացողութիւնն է, որը մանաւանդ խոր արմատներ է գցել Սահեան գիւղում. միմեանց զեղբը այրել, ծառերը կործանել, անասունը պատճառները զրգրած մամուլաբանութեան գիւղի սովորական են այդ գիւղում: Նոյն իսկ առաջին անգամ գիւղը մտնելիս, ես ակամատես եղայ երկու հարեանների մէջ

ձագած մի վիճարանութեան, որի միջոցին լսվում էին ամենախայտառակ հայհոյանքներ, որոնք, ինչպէս հուստագնում էին ինձ իմ ծանօթներս, շատ հեշտութեամբ կարող էին փոխել փայտի ու դազանակի:

Մեր յիշած գիւղերը (բացի Մասարի) բնակիչները շատ աշխատասէր մարդիկ են: Իսկ այդ վերջինի բնակիչները ծուլութիւնը հուշակված է Շամախու գաւառում. նոյն իսկ խօսելու ժամանակ այնքան ծանր են խօսում նրանք, որ ամենամեծ հարկերութիւն է հարկաւոր մասարեցու մի նախադասութիւնը լսելու համար: Բացի դա մասարեցիների մէջ շատ տարածված է դառը թամբալու ծխելը: Հետեւալ անեկողոր, որը պատմվում է տեղական ժողովրդի մէջ, լաւ գաղափար է տալիս զբաղ ծխախոտ գործածելու մասին. մի անգամ գիւղացիները ժողովում են մի տան կտրի վրա և այնքան թամբալու են ծխում և թրքում, որ քիչ ժամանակից յետոյ կտուրը ըսկում է կակի:

Խօսելով այսպէս մեր այցելած գիւղերի արեստեսական դրութեան մասին, մի քանի խօսք էլ ասանք նրանց մտաւոր և բարոյական դարգացման աստիճանի մասին:

Հընդար, Գեօղիշ և Մասարի գիւղերում ուսումնասիրաներ չը կան: Այդ վերջինիս մէջ ուսումնասիրան բանալու համար թեմական առաջնորդն անցնալ տարի Մարզապետական (Բնկերութիւնից) տարեկան 300 բուրջի նպատակ էր խնդրել: Այդ գումարը պիտի յատկացվի մի այնպիսի երիտասարդին, որը նախ, որպէս քանակապետ պիտի կատարէ ժողովրդի հոգևոր պէտքերը, երկրորդ՝ մաքուր բողոքական քարոզչները պրօպագանդայի դէմ (Մասարի բնակիչների մեծ մասը բողոքական է) և երրորդ՝ ուսուցչութեան պաշտօն վարի նոր բացվելի ուսումնասիրանում: Այդպէս գործի համար առաջարկում են ամենաչին վարձատրութիւն:

Ռուսումնասիրանի կան Գիւրջիլիս գիւղում՝ արքունական, և Սաղեանում՝ Բողոքական եղբայրների նախաձեռնութեամբ հիմնածը:

Բարոյապէս էլ ժողովրդը վերոյիշեալ գիւղերում այնքան առաջագիտած չէ. նեղ կուսակցա-

կան վէճեր, կռիւներ, թշնամութիւններ, որոնց պատճառները մէկը, մեր կարծիքով, շամախցի աղէտ բողոքական քարոզչների մուտք գործելն է ընդհանրապէս գաւառի հայաբնակ գիւղերը, որովհետեւ որտեղ յայտնվում են այդ ըստ իրանց անը և միարանութիւնը քարոզչները, այնտեղ ժողովուրդը նեղ կրօնական խնդիրներ աչքի առաջ ունենալով, բաժանվում է երկու կուսակցութեան, որոնցից իւրաքանչիւրը ամենայն կերպ աշխատում է մեզանք միմեան և այդպիսով մեծամեծ չարքներ են առաջանում գիւղում: Բողոքականները մի առանձին թաղ են կազմել իրանց համար:

Լաւ կանխէն հայ գիւղացիները, կիթէ օրինակ առնէին մօրօկան գիւղացիներից, որոնց մէջ համարաչափեան և փոխադարձ օգնութեան գաղափարը շատ դարգացած է:

Նորերումս ես անցնում էի մօրօկան գիւղով, որի մէջ մտնելով հետեւալ հետաքրքրութեան արժանի բանը տեսայ. գրեթէ իւրաքանչիւր խրճիթի դրան գլխից կայցրած էին մի մի տախտակներ, որոնցից ամեն մէկը վրա նկարած էին սպիտակ գույնով այս և այն երկրագործական գործիքները՝ տակաւ, թի, բաճ, զոլ և այլն... Իմ հարցին, թէ ինչ նշանակութիւն ունեն այդ տախտակները և նրանց վրա նկարած գործիքները, մօրօկան առաջնորդս պատասխանում է թէ, գիւղի մի որ և է մասում հրդեհ պատահած ժամանակ, այն գիւղացին, որի շէնքը զլինի նկարած է մի որ և է գործիքը, պարտաւոր է իր հետ վերցրած այդ գործիքը՝ օգնութեան հասնել հրդեհ պատահած տեղը: Այդ երկրից ցոյց է տալիս, թէ որքան է զարգացած մօրօկան գիւղացիների մէջ փոխադարձ օգնութեան գաղափարը:

Իսկ մեր հայ գիւղացիք իրանք են հրդեհում միմեանց ստացուածքը...

Գ. Գ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒՆ

Կարս, 26 յուլիսի

Ձեր լրագրի 74-րդ համարում, կարմից տրւած ված է եղել մի թղթակցութիւն, որի մէջ ան-

մէջ դարձած կամարածածկ սայլերով չլիք, շաւր, սիւնոցներ են մանածում. հին շուրի, աւելներ, կօշիկներ, մանրուք, հաց, և այլն ձեռքում մանածող ծախողներ էլ շատ կան. իջևաններ են պահում (ПОСТОЯЛЫЕ ДВОРЫ), դանազան զինաներում օղէվաճառութեամբ են զբաղվում:

Հեռանալ ծննդավայրից ծանր է հէնց զարգացման ամեն աստիճաններում գտնվող անհատի համար էլ. այստեղից եղբակցեցելու է որ մի ոյժ է մղում զարթոնականներին դէպի կործանիչ քայլ. այն, նրանց հրապուրում են արդէն պանդխտութեան մէջ փորձվածների առաջակցութեան պատմութիւնները հեռու երկրների վերաբերմամբ, նրանց զայնպիսով է իրանց հայրենակիցներից մի երկուսի հարստութեան համբաւը, նրանց քշում է հողի ու ջրի սակաւութիւնը և անտեսական դարգացողութեան ստոր աստիճանի վրա գտնվելը. նրանց հալածում են աղաները, վաչխտոռնները, որոնք կանաւանդ էլ Նախիջևանում ու շրջակայքում իրանց զարգացումը են դարձնել աղքատ ժողովրդի գլխին. դրանք միանալով այս կամ այն մէլիքին, տանուտերի, միբաւի և մի ուրիշ պաշտօնական անձի հետ անխնայ հարստահարում են անդրներին, խլելով նրանցից հողը, ջուրը ու հեռու վարելով հայրենի անից, ուստի դարմանալու այլ եւս տեղիք էլ չէ մնում, երբ գաղթածների մի որոշ մասը անձեղով է վերաբերվում հայրենալու ծննդավայրին:

Գանիցս առիթ ունենալով լինել Հ. Նախիջևանում, մեզ լաւ յայտնի է որ այնտեղ տիրում է ջրի սակաւութիւն, որից սարսափելի կռիւներ են ծագում. այդ այդպէս լինելով, ոչ զը այնտեղ ժողովրդը անգամ չէ անցկացնում երկրի անտեսա-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻՅ ԵԿԱԾՆԵՐԸ

Հայրենիքից դատված, օտարութեան մէջ անհրապառ շրջող կովիասցի, պարսկաստանցի, տաճկաստանցի հայերի գաղթականութեան լայն շրջանակները մէջ գրվելը և ծանօթ լինելը այս օտարաստիների կենցաղակարգութեանը ստիպում են ինձ մի քանի խօսքերով նկարագրել վերջինների աղօտ պատկերը: Թող ձեր վրազրկել հիւրընկալէ սոյն նկատողութիւնները, քանի որ նա իր ամբողջ գոյութեան ընթացքում, առիթը պահանջած դէպքում, բողոքում է զարթոնականութեան դէմ:

Թափառելու առաջին քայլը արեց Սալմաստը. նա երկար տարիներով վայելում էր աստանդական կեանքի պտուղները, մինչև կարողացաւ յիշատակած անտղ տարածել երկրագործ դասակարգին պատկանող հայերի շրջաններում անգամ: Գնալով անց, ծաւալվեց գաղթականութիւնը, մինչև որ վերջին ժամանակներս մի տեսակ անհրապառ պահանջ դարձաւ. չքաւորի համար էլ կապիտալիստի համար էլ հողատիրոջ համար էլ և մի կտոր հող չունեցողի համար էլ:

Սալմաստը շրջակայ գիւղերում Հ. Նախիջևանը, Երևանը, Գանձակը, Շուշին, Շամախին, Երազնակը, Ալեքսանդրօպօլը և այլն իրանց շրջակայքերում, այսօր դուրս են քշում իրանց պատկանելի Ռուսիայի դանազան քաղաքները, գիւղերը,

չինքը, աւանները, ստանիցաները, որտեղիցում շրջելով նրանք, չափազանց աշխատելով, բաւարար անողից, շատ անգամ մաքուր օղիք, կանոնաւոր կենցաղակարգութիւնից զուրկ մնալով, կմայլը դարձած, գիւղացիները նմանվելով, հաղաբար ստոր պաշտօններ յանձն առնելով, անկրտասն կերպով իրանց շուրջն են դնում, խոյս տալով ամեն կերպ տեղացիներից, որոնք խորին ատելութեամբ են վերաբերվում նրանց:

Գաղթականութիւնը անում է. դրա մէջ զարմանալու մի բանն էլ այն է, որ այժմ Հ. Նախիջևանի Գարապետապետի կողմից անգամ կանանց խմբեր են երևում, որոնցից շատերը յուսալով քաղցրամեծի կամ ծանօթների վրա, թափվում են այս կողմերը ու շատ անգամ անպաշտպան ընկած հրապարակի մէջ են մտնում... Գրանց մէջ աչքի են ընկնում գաղթականներ երկու սեռին էլ պատկանող Գարապետապետի Ան, Փոռ, Մարտիրոս, Ազադէր, Մալիչգետա, Նոյրա և այլն գիւղերից, սակայն սրանցից շատերը հիասթափվելով դրում են իրանց սխալ յիշելով հայրենիքը, աշխատում, չուտով առողջութիւնը կորցնում, թողնում ու հաղար անէճքներ թափելով, վերադառնում են հայրենիքը:

Գաղթականների մէջ թուրք ազգաբնակչութեան պատկանող անհատներ չը կան, օրնէ կովիասի կողմից. հայը գաղթում է, թուրքը երկրում հասնում ու զբանից առաջացած անհասարակութիւնից յանձնառեալ երկրիցն են տեղի ունենում երկու հարեան ազգերի մէջ, որոնց անհամարաչափ կենցաղը երկրի անտեսական առաջնականութեան արդեւաբանութիւնը զվարճում է դառնում. թուրքը հեռու է ընտանիքին

քայքայում սպաւնացող գաղթիւր մտքից, նա ստիպութիւն չունի մի քայլ անգամ հեռանալ նորածիլ ընտանիքի կողքից, թողնելով նրան կիսակիր մի երկրում վաճառելով շրջապատված. հարկաւոր հայ կանաք ստուգվում են նորակալի կանք վարելով. 10—14—20 տարի հեռու մնալով ընտանիքի հայը կոչվող անհատից. նրանք ջանալով ծածկել իրանց վշտերը՝ հալ ու մաշ են լինում, սպասելով արդէն անարդարացի անցած ամուսնու վերադարձին: Հայտնում յատուկ ամօթխածութիւնը, հայ կնոջ դարաւոր ստրկութիւնը ստիպում են նրան տանել ճակատադրի կործանիչ հարուածը, որը երբեմն քան տարի է տևում. սակայնները միայն խնդրամտոյց լինելով հողերը իշխանութեան մի ելք, մի փրկութիւն են որոնում դուրս գալու սարսափելի դրութիւնից, որ շատ անգամ, դժբաղբաբար, չէ էլ աշողվում:

Գաղթած հայերը մեծ մասամբ խանութպանութեամբ, փողոցներում ցիտրոնավաճառութեամբ, մրգավաճառութեամբ, ջրկիրութեամբ, մշակութեամբ, ծառայութեամբ, թէ երկաթուղու կայարաններում, թէ սննդում, սպալապանութեամբ, հացթուխութեամբ, կօշկակարութեամբ, ոսկերչութեամբ, երբեմն էլ երիտասարդներից գործակատարութեամբ, կապալառութեամբ, վաչխտոռններ են պարսպում. հիւրանոցներում, կայարաններում ծառայել է պաշտօնի պաշտօն են վարում. մի մասը չարախիներում նստոտած զանազան թաղ ու չոր միջրը, մանր սարքանքներ վաճառելով են զբաղված. մի մասը նկուղների մէջ են նոյն արհեստը առաջ տանում. գիւղերում պայուսակների

դիտել յետոյ՝ տեղի ունեցաւ Պրէզերածենակի բա-
նակի այցելութիւնը, ուր թագաւոր կայսրը խոնջ
Պրէզերածենակի գնդի կենացը: Զօրահանդիսից
յետոյ կայացած նախաճաշիկի ժամանակ, թագա-
ւոր կայսրը առաջարկեց զերմանական կայսրի
կենացը, առաջ աւստրիական կայսրի կենացը,
նորա ծննդեան օրվայ առիթով: Գերմանական
կայսրը ուստերէն լեզուով առաջարկեց թագաւոր
կայսրի կենացը: Ապա գերմանական կայսրը ըն-
ծայեց Նոյա Մեծութիւններին մի հիանալի կառ-
ժանը 3-ին սկզբից ժողովրդական դրօսանք Նար-
վայի ամերուսէ: Մտտ ժամը 4-ին Նոյա Մեծու-
թիւնները և բարձրագիր Նիւրբերգնացին քաղաք,
ուր այցելեցին քաղաքային տունը, Պետրոս Մեծի
անակը և իմանաբող:

ՊրԱԳԱ, 7 օգոստոսի: Կայսրի ծննդեան տօնի
առիթով այստեղի «Deutsche Landestheater»-ի
մէջ Սթրալսկի Վորդելիա օպերան, որը ներկայաց-
վեց փառաւոր սարք ու կարգով, մեծ աջողու-
թիւն ունեցաւ: Կոմպոզիտորին բեմ կանչեցին մի
քանի անգամ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 օգոստոսի: Հրատարակված
է բարձրագոյն հրաման ևւրօպական սահմանով
ներս մուծվող շաքարի մաքուր բարձրացնելու մա-
սին: Անպատրաստ շաքարը, ծեծած կամ աղա-
ցած, առանց կտորների, նաւահանգիստներից և
ցամաքային սահմաններից 3 լուբրի, բաֆինադ,
մելիս, լուսի, լեղինեց, դիտով և կտորներով Սև
և Աջօվեան նաւահանգիստների միջով 90 կօպ-
ոսով, մնացած նաւահանգիստների և ցամաքա-
յին սահմանի միջով 3 լ. 90 կօպ. շաքարի մաք-
ուր պէտք է մտցնել բարձրագոյն հրամանի հրա-
տարակած օրէց: Հրատարակված է ուկրա խար-
կով-Կրէմչուզեան երկաթուղու 5% օրիգացիա-
ները յետ դիւրու և 1890 թի չորրորդ հրատա-

րակութեան ուսուական 4% ոսկեայ փոխառու-
թիւն կայացնելու մասին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ
Օգոստոսի 7-ին

Լճործի վրա 10 ֆունտ արծէ.	82	բ.	20	կ.
Բերլինի վրա 100 մարկ	40	>	30	>
Փարիզի վրա 100 ֆրանկ	32	57	1/2	>
Ոսկի	6	>	58	>
Մաքսային կուպօններ	131	>	75	>
Արծաթ	1	>	10	>
Բորսային դիվիդենդներ	5	և	6 1/2	0/0
Պետ. բանկի 5% տուս 1-ին շրջանի.	100	>	75	>
.	100	>	—	>
.	99	>	87	>
.	99	>	87	>
.	99	>	87	>
.	99	>	87	>
.	99	>	87	>
4% ոսկեայ փոխառութիւն	—	>	—	>
6% ոսկեայ րէնտա	140	>	50	>
Արևելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	101	>	—	>
.	101	>	25	>
.	101	>	25	>
Ներքին 5% առաջին փոխառութ.	230	>	—	>
.	220	>	—	>
.	212	>	25	>
Պետական. երկաթուղային բէնտա	100	>	75	>
5 1/2% բէնտա	104	>	12	>
4% ներքին փոխառութիւն	88	>	—	>
5% դրաւ. թղթ. աղն. կալ. բանկի	99	>	87	>
4% մկայակ. դիւլ. հող. բանկի.	103	>	75	>
4 1/2% դրաւական թղթեր կալուած.	—	>	—	>
.	—	>	—	>
.	97	>	75	>
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ.	96	>	87	>
ընկերութեան օրիգացները.	95	>	25	>
Մօսկուայի քաղաք. օրիգացիաներ.	95	>	75	>
Օղէտայի	—	>	—	>
Թիֆլիսի	—	>	—	>
Կրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	—	>	—	>
.	—	>	—	>
Ս. Պետերբուրգի բորսայի արանագրութիւնը	—	>	—	>
հանդարտ է:	—	>	—	>

Խորագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԻՈՒՆԻ

ԹԻՖԼԻՍԻ ԿԱԼՈՒԱԾԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԹԱՏՐՈՆ
Շուտով Թիֆլիս կը գայ հին գ ներկայացում ապու համար ուսական և մօլ-
բութական ԹՁՈՒԿՆԵՐԻ (ԱՄԱՍՍԿԵՆ) խումբը:
1—4

Գ. կարգի մի ՈՒՍՈՒՑԻՉ ցանկանում է տեղ զանել մեր ծխական դպրոցները
միտում: Յանձն կառնի դիւաւորապէս դասեր ՀԱՅՈՑ լեզուից:
Յանկացողները կարող են դիմել ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏ, պ. Գեորգ Գայեանցին:
1—3

Մի երկտասարդ, որ քաջ զիտէ Փրանսերէն, բնակութիւն հաստատելով Թիֆլիսում
ցանկանում է ՅՐԱՆՍԵՐԷՆԻ ՄԱՍՆԱՌՐ ԳԱՍԵՐ տալ, շատ ՄԱՏՁԵԼԻ ԳՆՈՎ: Յանկացող
ները կարող են դիմել Սայի-օղլու ծխախոտի դործարանը (Բերուսովսկայա փողոց) և
հարցնել Յովհաննէս Գլուբլեանցի:
1—10

Ալէքսանդրօպօլի ա. Փրկիչ եկեղեցու երկրասեան տղայոց դպրոցի հոգաբարձութիւն
նը հրաւիրում է պետական միջնակարգ դպրոցի ուսումնաւարտ և ուսուցչութեան իր-
ւունք ունեցող ՌՈՒՍԱՅ ԼԵՂՈՒԻ ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ, որ աւանդելու է շաքարածխական 24-
դաս-առաջին կուրսի որոշած ուսմանը: Յանկացողները դիմելու են հոգաբարձութիւն
նախազահին հետեւեալ հասցէով. Александрополь, священнику Месроп
Геоуджянц.
1—3

Ե. ԿԱՐԳԻ ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ, որ աւարտել է ուսուցչական ինստիտուտը, ցանկանում
է պաշտօն ունենալ հայոց դպրոցներում: Կը պարապի ուսուցչ լեզուից: Համաձայն
ստանձնել և աւագ-ուսուցչի պաշտօն: Յանկացողները հասցէն կարող են իմանալ «Ար-
րիւրի» խմբագրատանը, ուր և կարող են դիմել օտար քաղաքներէ:
1—5

ԾԱԽՎՈՒՄ Է ՄԻ ՉՈՑԳ ՄԱՐՄԱՐ ԳԱՐ
Պարկաստանից ստացված, հաւատար մեծութեամբ: Երկարութիւնը 2 արշին 23 վի-
շօկ, լայնութիւնը 1 արշին 3 վիշօկ, հաստութիւնը 5 վիշօկ:
Դիմել Խորսուկի քարափաստարան, Աւախեանցին:
1—5

«ՄԻՇՈՒՆԱՅ»
ՄԿՆԵՐ ԿՈՏՈՐԵՎՈՒ ՌՄ ԳՈՒՍՄԱՆԻ ՄԻՉՈՑՆԵՐԸ
Գլխաւոր պահեստը գտնվում է Թիֆլիսում և Բազում
Բարձրագոյն հաստատված զեղատան ապրանքների վաճառ մե
կովիստան ընկերութեան ժամ:
1—50 (5)



Մի հայ ՕՐԻՈՐԴ, ուսուցչական ցանկի Ը. կարգից, ցանկանում է հայոց ծխ-
կան օրիորդական դպրոցներում դասաւուսչութիւն անել, շաքարածխական 20—24 դասով
հետեւեալ աւարականից. 1) Հայոց լեզուից Ա. Բ. և Գ. դասարաններում, 2) Թւար-
նութիւնից նոյնպէս երեք պարաստականներում, 3) Հայոց վայելչագրութիւն, դժ-
գրութիւն և ձեռագործութիւն բոլոր դասարաններում: Ցանկանում է նաև կար ու ձեկ
ստանձնի պարզ դժագրական մեթօդով դաս տալ և ինել կարգապահ վարժուհի:
Պայմանները համար դիմել ԵՐԵՒԱՆ, Խաչատուր Մէլիքեանցին:
6—10

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ե. կարգի մի ՈՒՍՈՒՑԻՉ ցանկանում է հայոց ծխական-եկեղեցական դպրոցներում
պաշտօն ունենալ: Կը պարապի ուսուցչ լեզուից: Հասցէն. Тифлисъ, Абасъ-Абасекай
площадъ, № 9, домъ Мириманова, А. Тигранянцъ.
3—3

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Թիֆլիս, Նազօրնայա փողոց, № 9)
Յանկացողը, ունենալ իրանց առևտրական գործերի համար, այն յունիս ամսում
ուսման ընթացքը աւարտած ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ԵՒ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐ, թող բարհաճնն դի-
մել կուրսերի հիմնողին Ս. Մանուէլեանցին: Աւարտողները ստացել են մասնա-
գիտական առևտրական կրթութիւն, կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի
հաստատված ծրագրի համեմատ, և ունեն օրիւն աւարտ ատտեստատներ:
Ընդունելութիւնները սկսվելու են սեպտեմբերի 1-ից: Կուրսերի ծրագիրը և կանոն-
ները կարելի է ստանալ ձրի ապէս կըր. Ծովիսնիցների բանկային գրասենեակում
և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, учре-
дителю курсовъ С. П. Мануэльянцу.
3—12 (2)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մտտ 10 արի լինելով ՕՂԵՍՍԱՑՈՒՄ, և կատարելով կոմիսիական գործեր,
հրապարակաւ յայտնում ենք կովկասեան և Անդրիովկասեան պատուելի հասարակու-
թեանը, որ դարձեալ եղբայր ԱԲԳԱՐԵԱՆՅՆԵՐՍ սովորականի համեմատ ընդունում ենք
յանձնարարական պայմանով դանազան ապրանքների վաճառելու:
Նաև կատարում ենք ապրանքների գնելու, ծախելու և ուղարկելու պատուէրներ:
Յանկացողները պայմանները մասին կարող են դիմել ինձ. ОДЕССА НИКИТУ
Апварову».
2—10

Հինգերորդ կարգի մի ՈՒՍՈՒՑԻՉ, որը իր ուսումը աւարտել է ուսուցչ
ուսուցչական Սեմինարիայում և հինգ արի ուսուցչի պաշտօն է վարել ուսուցչ և
հայոց ուսումնարաններում, ցանկանում է այժմ տեղ ունենալ մի որ և է հայոց ու-
սումնարանում առաջին կուրսի:
Դիմել պայմաններով, ЭРИВАНЬ, Судебному Приставу Абрамову.
5—10

ԾԻԱԽՈՏԻ ԷԿՍՏՐԱԿՏ

ՆԻԿՈԼԱՅ ԲՈՂԴԱՆՏՈՎԻ ԵՒ ԸՆԿ.


ԱՄԵՆԱԼԱԻ ԵՒ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՄԻՉՈՑ ոչխարներին, եղջիւրաւոր և այլ կենդանիներ-
րին բորտութիւնից և կաշու ուրիշ ամեն տեսակ հիւանդութիւններից բժշկելու, նմա-
նապէս ձիերին, շներին կաշու ամեն տեսակ հիւանդութիւններից և թռչուններին
պարազիտներից բժշկելու համար:
ՊԱՀՊԱՆՈՒՄ է ամեն տեսակ ծաղիկներ, բոյսեր, ծառեր և բանջարեղէններ՝ որդն-
րից, թրթուրներից և ուրիշ միջաններից:
ԳԼԽԱՌՈՐ ՊԱՀՅԱՏ Թիֆլիսում՝ Գեղազորձական Ապրանքների վաճառման ԲԱՐՁՐԱ-
ԳՈՅՆ հաստատված կովկասեան ընկերութեան մէջ:
7—25 (5)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՂՈՒԲԱՅԻ հայոց երկես դպրոցներին հարկաւոր են երեք ուսուցիչներ և մի վար-
ժուհի. ուսուցիչները մինը ՌՈՒՍԱՅ լեզուի համար է՝ ցանկայի է, որ նա աւարտած
լինի ուսուցչական ինստիտուտում, միւսը՝ ԿՐՕՆԻ և ԵՐԳԵՑՈՂՈՒԹԵԱՆ—ը կարգի, երրորդը
ՀԱՅՈՑ ԼԵՂՈՒԻ և ԹՈՒԱԲԱՆՈՒԹԵԱՆ—ը կամ գ. կարգի, իսկ վարժուհին—ԶԵՆՈՒԳՈՒ-
ԾՈՒԹԵԱՆ և ԹՈՒԱԲԱՆՈՒԹԵԱՆ (կամ հայոց լեզուի) համար է: Խրաքանչիւրը կունենայ
Ե4—28 դաս և ուսման կը ստանայ առաջին կուրսով: Կրանցից ընտրվելի աւագ-ու-
սուցչի համար սահմանված է ուսման կը դուրս միմիայն հարիւր (100) լուբրի: Ցանկա-
ցողները թող դիմեն հոգաբարձութեան
4—5

Մ. Գ. ՑԷՅՏԼԻՆԻ

ԺԱՄԱՑՈՑՆԵՐԻ ՄԱԳԱՋԻՆԻ
ՕՊՏԻԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆԻԲԸ
Պայտի այդու դիմաց, անկիւնի մազադիւնում, ստացված է մեծ ընտրութիւն՝ ոսկեայ, նոս-
ոսկեայ, նիկելեայ, պողպատեայ և կրիայի ոսկորից ԱՎՆՈՑՆԵՐ, ՊԷՆՏԵՆԵՐ և ԼՈՐԵՆՏԵՐ: Թատրոնական և դաշտային ԲԻՆՈ-
ՎԻՆԵՐ, ՋԵՐՄԱՍՏՈՒՄԵՐ, թէ սենեակների, թէ դուրսը կարելու և
թէ վանանների համար: Վերաստուգված և վկայական ունեցող
ՄԱԿՍԻՄԱԼ չերմաչափեր: Լօրնտի և պէնսիլի համար ոսկեայ,
արծաթեայ, նոր-ոսկեայ շղթաներ, նմանապէս մետաքսեայ և մե-
տալական թելեր:
Ակնոցներ և պէնսիլներ արվում են նմանապէս բժշկների
պատուէրով:
Մազադիւնում յանձն են առնում նմանապէս փչացած իրերի
նորոգելը և ապագիների գնելը:
ԳՆԵՐԸ ամենաչափաւոր են:
28—50 (5)

ԳՐՈՎԻՉՈՐ Ա. ՇՏԷԻԷՐԻ ՄԻՉՈՑՆԵՐԸ

ԱՏԱՄԵՐԻ ՑԱԻԻ ԵՒ ՓՁԱՆԱԼՈՒ ԴԷՄ
ՊՈՂՈԼԵԱՆ ԱՏԱՄՆԱԿԵՂ ԿԱԹՈԼԻՆԵՐ 50 ԿՈՊ.
ԱՌՈՂԱՍՊԱՅԱԿԱՆ ԿՈԿՍԵՐԵԱՆ ԱՏԱՄՆԱՅԻՆ ԷԼԻԿՍԻՐ 80 ԿՈՊ.
ԱՌՈՂԱՍՊԱՅԱԿԱՆ ԱՏԱՄՆԱՅԻՆ ՓՈՇԻ 30 ԿՈՊ.

ԳԼԽԱՌՈՐ ՊԱՀՅԱՏ.
ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ Գեղազորձական
ապրանքների կովկասեան ըն-
կերութեան մէջ և պ. պ. Շահ-
պարոնեանցի, Մակիկերի, Սէնչի-
կօվսկու և Ագմուրօվի զեղա-
սներում:
24—52 (2)

